ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

10 ապրիլի 2024թ. թիվ 293

Կ.ԱԴԱՄՅԱՆԻՆ ԵՎ Մ.ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ
ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի ապրիլի 9-ի թիվ ԳՍ/15.4/11468-2024 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Կարինե Ադամյանին և ֆինանսական վարչության պետ Մերի Դալլաքյանին ս/թ ապրիլի 11-ին մեկ օրով գործուղել ք.Երևան՝ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ-ում «Եկամուտների համատարած ինքնահայտարարագրման համակարգ» թեմայով դասընթացին մասնակցելու համար:

2. Մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

10/04/2024

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2024թ. ապրիլի 10
ք.Վանաձոր